

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 ապրիլի 2002 թվականի թիվ 87

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱԶՄՄԱՆ ԿԱՐԳԸ» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը **որոշում է.**

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող համախմբված հաշվետվությունների կազմման կարգը» (կցվում է):

2. Սույն որոշմամբ հաստատված կարգի հավելվածներով սահմանված հաշվետվություններն ուժի մեջ են սույն որոշման հրապարակման պահից 3 ամիս անց:

3. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակման պահից:

Նախագահ

Տ. Սարգսյան

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2002 թվականի ապրիլի 2-ի
թիվ 87 որոշմամբ

Կ Ա Ր Գ

ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ

Սույն կարգի նպատակն է՝

Բացահայտել բանկի ֆինանսական վիճակի վրա այլ կազմակերպությունների կանոնադրական հիմնադրամներում բանկի ներդրումների (որոնց արդյունքում ներդրման օբյեկտ հանդիսացող ընկերությունները դառնում են բանկի դուստր կամ ասոցիացված ընկերություններ), նրանց հետ գործառնությունների և գործարքների իրականացման, նրանց գործունեության կառավարմանը մասնակցելու ազդեցությունը:

ԿԱՆՈՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կարգը կարգավորում է՝

ա) Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող համախմբված հաշվետվությունների ներկայացումը,

բ) Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող համախմբված հաշվետվությունների կազմման ընթացակարգը,

գ) Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի կողմից կենտրոնական բանկ ներկայացվող առանձին հաշվետվություններում դուստր և ասոցիացված ընկերություններում բանկի ներդրումների արտացոլումը:

1.2. Համախմբված հաշվետվություններ կազմում են այն բանկերը (մայր բանկերը), որոնք վերահսկում են այլ կազմակերպությունների (դուստր ընկերությունների) գործունեությունը:

1.3. Մայր բանկը համախմբում է՝

ա) այն դուստր ընկերությունների հաշվապահական հաշվետվությունները, որոնք հանդիսանում են բանկեր կամ

իրականացնում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված գործունեություն,

բ) այլ դուստր ընկերությունների հաշվապահական հաշվետվությունները՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի որոշման համաձայն:

Մայր բանկը սույն կետի «ա» և «բ» ենթակետերով սահմանված դուստր ընկերությունները համախմբում է, անկախ այն բանից՝ դուստր ընկերությունը գործում է Հայաստանում, թե արտերկրում:

1.4. Մայր բանկը չի համախմբում այն դուստր ընկերությունների հաշվապահական հաշվետվությունները.

ա) որոնց հանդեպ վերահսկողությունը լինելու է ժամանակավոր, այսինքն՝ այն գնվել է բացառապես մոտ ապագայում (ձեռքբերումից 12 ամսվա ընթացքում) օտարելու նպատակով, և մայր բանկի ղեկավարությունը ակտիվ միջոցներ է ձեռնարկում գնորդներ գտնելու համար կամ,

բ) որոնք գործում են երկարատև խիստ սահմանափակումների պայմաններում՝ այսինքն՝ փաստացի չեն վերահսկվում մայր բանկի կողմից, որը զգալիորեն իջեցնում է մայր բանկին միջոցներ փոխանցելու դուստր ընկերության հնարավորությունը (սա վերաբերում է այն դեպքերին, երբ դուստր ընկերությունը չի վերահսկվում մայր բանկի կողմից. այսպես՝ սնանկացման վարույթում գտնվող դուստր ընկերության փաստացի վերահսկողությունը դրվում է պետական կառույցների վրա) կամ,

գ) որոնցում ներդրումները էական չեն մայր բանկի համար:

Սույն կետով սահմանված դուստր ընկերությունների հաշվապահական հաշվետվությունների բացառումը համախմբված հաշվետվություններից իրականացվում է բանկի խորհրդի որոշմամբ: Համախմբված հաշվետվություններից դուստր ընկերությունների հաշվապահական հաշվետվությունների բացառման վերաբերյալ բանկի խորհրդի որոշումը՝ որոշման կայացումը հիմնավորող փաստաթղթերի հետ մեկտեղ, ներկայացվում է Կենտրոնական բանկ՝ համախմբված հաշվետվությունները Կենտրոնական բանկ ներկայացնելու՝ սույն կարգով նախատեսված ժամկետներում:

Եթե դուստր ընկերությունը, որը սույն կետի «ա» ենթակետով սահմանված հիմքով նախկինում բացառվել էր համախմբումից, ձեռքբերումից 12 ամսվա ընթացքում չի օտարվում, ապա մայր բանկը այն ներառում է համախմբման մեջ դուստր ընկերության ձեռքբերման պահից և ներկայացնում (կրկին ներկայացնում) է դուստր ընկերության ձեռքբերման պահից Կենտրոնական բանկ ներկայացված իր համախմբված հաշվետվությունները:

Սույն կարգի իմաստով՝ դուստր ընկերություններում ներդրումները էական են բանկի համար, եթե գործում է հետևյալ պայմաններից որևէ մեկը՝

ա) հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դուստր ընկերության զուտ ակտիվներում մայր բանկի

բաժնեմասը գերազանցում է մայր բանկի ընդհանուր ակտիվների 1 %-ը,

բ) հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ առանձին դուստր ընկերությունների զուտ ակտիվներում մայր բանկի բաժնեմասը չի գերազանցում մայր բանկի ընդհանուր ակտիվների 1 %-ը, սակայն բոլոր դուստր ընկերությունների զուտ ակտիվներում մայր բանկի բաժնեմասերի հանրագումարը գերազանցում է մայր բանկի ընդհանուր ակտիվների 5 %-ը,

գ) հաշվետու ժամանակաշրջանում դուստր ընկերության զուտ շահույթում (վնասում) մայր բանկի բաժնեմասը համապատասխանաբար գերազանցում է մայր բանկի զուտ շահույթի (վնասի) 1 %-ը,

դ) հաշվետու ժամանակաշրջանում առանձին դուստր ընկերությունների զուտ շահույթում (վնասում) մայր բանկի բաժնեմասը համապատասխանաբար չի գերազանցում մայր բանկի զուտ շահույթի (վնասի) 1 %-ը, սակայն բոլոր դուստր ընկերությունների զուտ շահույթում (վնասում) մայր բանկի բաժնեմասերի հանրագումարը գերազանցում է մայր բանկի զուտ շահույթի (վնասի) 5 %-ը,

ե) դուստր ընկերություններում ներդրումները էական են համարվել բանկի խորհրդի որոշմամբ և (կամ) Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ:

Եթե դուստր ընկերությունը, որը սույն կետի առաջին պարբերության «գ» ենթակետով սահմանված հիմքով նախկինում բացառվել էր համախմբումից, ապա մայր բանկի կողմից դուստր ընկերություններում ներդրումների էականության գնահատումը (էական չհամարվելը) շարունակվում է իրականացվել յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջին և հաստատվում է բանկի խորհրդի կողմից: Բանկի խորհրդի համապատասխան որոշումը՝ ներդրումն էական կամ էական չհամարելու վերաբերյալ, ներկայացվում է Կենտրոնական բանկ՝ համախմբված հաշվետվությունները Կենտրոնական բանկ ներկայացնելու սույն կարգով նախատեսված ժամկետներում:

1.5. Համախմբված հաշվետվությունում մայր բանկի և դուստր ընկերությունների հաշվապահական տվյալները ներառվում են միևնույն հաշվետու ամսաթվի դրությամբ: Եթե համախմբման համար օգտագործվող մայր բանկի և դուստր ընկերությունների հաշվապահական հաշվետվությունները կազմված են տարբեր ամսաթվերի դրությամբ, ապա.

ա) դուստր ընկերությունը պատրաստում է լրացուցիչ հաշվետվություններ՝ մայր բանկի հաշվետվության ամսաթվի դրությամբ, կամ

բ) եթե ժամանակային տարբերությունը չի գերազանցում երեք ամիսը, դուստր ընկերությունը կատարում է համապատասխան ճշգրտումներ, որոնք պետք է արտահայտեն դուստր ընկերության և մայր բանկի հաշվետվությունների կազմման ամսաթվի միջև ընկած ժամանակաշրջանում կատարված էական

գործառնությունները և այլ իրադարձությունները:

1.6. Համախմբված հաշվետվությունները կազմվում են՝ օգտագործելով միևնույն հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Այն դեպքում, երբ դուստր ընկերությունները օգտագործում են համախմբման համար ընդունված հաշվապահական քաղաքականությունից տարբերվող քաղաքականություն, ապա դուստր ընկերությունները համախմբված հաշվետվություններ կազմելու համար մայր բանկին են տրամադրում իրենց առանձին հաշվետվությունները՝

ա) համապատասխան ճշգրտումներ կատարելուց հետո և (կամ),

բ) ներկայացնելով բացահայտումներ այն հոդվածների վերաբերյալ, որոնց նկատմամբ չի օգտագործվել միևնույն հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, և որոնք ենթակա են ճշգրտման մայր բանկի կողմից:

1.7. Համախմբված հաշվետվությունները ստորագրվում են մայր բանկի գործադիր մարմնի ղեկավարի և գլխավոր հաշվապահի կողմից:

(Կանոն 1-ը խմբ. 12.06.07 N 181-Ն)

ԿԱՆՈՆ 2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Սույն կարգի իմաստով.

(Նախաբանը լրաց. 12.06.07 N 181-Ն)

2.1. Մայր բանկ՝ այն բանկը, որն ունի դուստր ընկերություն:

2.2. Դուստր ընկերություն՝ տնտեսական ընկերությունը համարվում է դուստր, եթե այլ (հիմնական) տնտեսական ընկերակցություն կամ ընկերություն, նրա կանոնադրական կապիտալում իր գերակշռող մասնակցության (ուղղակի կամ այլ անձանց միջոցով) ուժով կամ նրա կանոնադրական կապիտալում առնվազն 4.99 % մասնակցության ուժով և նրանց միջև կնքված պայմանագրին համապատասխան՝ հնարավորություն ունի կանխորոշել նման ընկերության որոշումները և, հետևաբար, վերահսկել նրան:

(2.2 կետը խմբ. 12.06.07 N 181-Ն)

2.3. Վերահսկում՝ կազմակերպության գործունեությունից օգուտներ ստանալու նպատակով նրա ֆինանսական և գործառնական քաղաքականությունը ղեկավարելու իրավունքն է:

Վերահսկման իրավունքը համարվում է ստացված, երբ կազմակերպություններից մեկը ձեռք է բերում մյուս կազմակերպության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի) կեսից ավելին, եթե միայն բացառիկ դեպքերում չի կարելի հստակ ցույց տալ, որ այդպիսի սեփականության իրավունքն իրենից վերահսկում չի

ներկայացնում: Այսպես՝ վերահսկում առկա չէ, եթե՝

ա) հաշվետու տարվա ընթացքում մայր բանկը ոչ մի ձևով չի միջամտել դուստր ընկերության կառավարմանը,

բ) նախորդ հինգ տարիների ընթացքում չի օգտվել ձայնի իրավունք տվող բաժնետոմսերով իրեն վերապահված իրավունքներից՝ խորհրդի և գործադիր մարմնի անդամների ընտրության դեպքում:

Եթե նույնիսկ միավորվող կազմակերպություններից մեկը ձեռք չի բերում միավորվող մյուս կազմակերպության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի) կեսից ավելին, դեռևս հնարավոր է որոշել ձեռք բերողին, եթե կազմակերպություններից մեկը ձեռք է բերում մյուսի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 4.99%-ից ավելին, և առկա է հետևյալ պայմաններից որևէ մեկը՝

ա) այլ ներդրողների հետ համաձայնության հիման վրա՝ այլ կազմակերպության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի) կեսից ավելի նկատմամբ իրավունք, կամ

բ) կանոնադրության կամ համաձայնագրի հիման վրա, ինչպես նաև այլ կերպ՝ այլ կազմակերպության ֆինանսական կամ գործառնական քաղաքականության նկատմամբ կառավարման իրավունք, կամ ընթացիկ գործունեության կանխորոշման հնարավորություն, կամ

գ) այլ կազմակերպության տնօրենների խորհրդի կամ կառավարման համազոր մարմնի անդամների մեծամասնությանը նշանակելու կամ պաշտոնանկ անելու իրավունք, կամ

դ) այլ կազմակերպության տնօրենների խորհրդի կամ կառավարման համազոր մարմնի ժողովներում ձայնի մեծամասնության նկատմամբ իրավունք:

(2.3 կետը խմբ. 01.07.03 N 234-Ն, լրաց. 12.06.07 N 181-Ն)

2.3.1. Հսկողության տրկոս՝ անձի մասնակցության բաժինը (ուղղակի և (կամ) այլ անձանց միջոցով) այլ կազմակերպության կանոնադրական կապիտալում (բաժնետիրական ընկերությունների համար՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի մասով)՝ տոկոսային արտահայտությամբ:

(2.3.1. կետը լրաց. 12.06.07 N 181-Ն)

2.3.2. Շահույթում մասնակցության տրկոս՝ շահաբաժինների տեսքով շահույթ ստանալու իրավունքի բաժինը (ուղղակի և (կամ) այլ անձանց միջոցով) այլ կազմակերպության շահույթում՝ տոկոսային արտահայտությամբ:

(2.3.2. կետը լրաց. 12.06.07 N 181-Ն)

2.4. Ասոցիացված կազմակերպություն՝ կազմակերպություն է, որտեղ ներդրողն ունի նշանակալի ազդեցություն, և որը չի հանդիսանում ներդրողի ոչ դուստր, ոչ էլ համատեղ կազմակերպությունը:

2.4.1. Համատեղ կազմակերպություն՝ պայմանագրային կարգավորում է, համաձայն որի երկու կամ ավելի կողմեր

իրականացնում են տնտեսական գործունեություն, որը ենթակա է համատեղ վերահսկողության:

(2.4.1. կեպը լրաց. 12.06.07 N 181-Ն)

2.4.2. Կախյալ ընկերություններ՝ համատեղ և ասոցիացված կազմակերպություններ:

(2.4.2. կեպը լրաց. 12.06.07 N 181-Ն)

2.5. Նշանակալի ազդեցություն՝ ներդրման օբյեկտի ֆինանսական և գործառնական քաղաքականության գծով որոշումներ կայացնելուն մասնակցելու հնարավորությունն է, բայց ոչ այդ քաղաքականության վերահսկումը:

Երբ ներդրողին պատկանում է ներդրման օբյեկտի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի ոչ պակաս, քան 20 տոկոսը, ապա համարվում է, որ ներդրողն ունի նշանակալի ազդեցություն, եթե միայն հակառակը հնարավոր չէ հստակ ապացուցել: Եվ հակառակը, եթե ներդրողին պատկանում է ներդրման օբյեկտի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 20 տոկոսից պակասը, ապա համարվում է, որ ներդրողը չունի նշանակալից ազդեցություն, եթե միայն հակառակը հնարավոր չէ հստակ ապացուցել:

Ներդրողի նշանակալից ազդեցության մասին, սովորաբար, վկայում է հետևյալ փաստերից որևէ մեկը՝

- ա) ներկայացուցչություն ներդրման օբյեկտի տնօրենների խորհրդում կամ համարժեք կառավարման մարմնում,
- բ) մասնակցություն քաղաքականության ձևավորման գործընթացին,
- գ) ներդրողի և ներդրման օբյեկտի միջև էական (խոշոր) գործարքներ,
- դ) կառավարչական անձնակազմի փոխանակում,
- ե) կարևոր տեխնիկական տեղեկատվության տրամադրում:

2.6. խումբ՝ ներառում է մայր բանկը, նրա դուստր և կախյալ ընկերությունները:

(2.6. կեպը խմբ. 12.06.07 N 181-Ն)

2.7. Համախմբված ֆինանսական հաշվետվություն՝ սույն կարգի համաձայն կազմված խմբի, որպես մեկ տնտեսական միավորի, ակտիվների և պարտավորությունների, զուտ ակտիվների, ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունները:

2.7.1. Մայր բանկի առանձին հաշվետվություն՝ մայր բանկի կողմից կազմված հաշվետվություն, որտեղ այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումների հաշվառումը տարվում է ուղղակի մասնակցության հիման վրա:

(2.7. կեպը լրաց. 12.06.07 N 181-Ն)

2.8. Փոքրամասնության բաժնեմաս՝ դուստր ընկերության գործունեության զուտ արդյունքների և զուտ ակտիվների այն մասը, որը վերագրվում է մայր բանկին չպատկանող բաժնեմասին:

2.9. Ձեռքբերում՝ մայր բանկի կողմից այլ ընկերության կապիտալում այնպիսի մասնակցություն, որի ուժով այլ կազմակերպությունը համարվում է դուստր ընկերություն:

2.10. Ձեռքբերման ամսաթիվ՝ այն ամսաթիվն է, երբ ձեռք բերվող կազմակերպության զուտ ակտիվների և գործառնությունների նկատմամբ վերահսկումը փաստացի անցնում է ձեռք բերողին: Երբ այդպիսի վերահսկողությունը ձեռք է բերվում փոխանակման մեկանգամյա գործարքի միջոցով, ապա փոխանակման ամսաթիվը համընկնում է ձեռքբերման ամսաթվին: Երբ ձեռքբերումն իրականացվում է փոխանակման հաջորդական գործարքների (օրինակ՝ բաժնետոմսերի հաջորդական գնումների) միջոցով, ապա փոխանակման ամսաթիվ է համարվում յուրաքանչյուր գործարքի ամսաթիվը, մինչդեռ ձեռքբերման ամսաթիվ է համարվում այն գործարքի ամսաթիվը, որի արդյունքում ձեռք է բերվում վերահսկողությունը ձեռք բերվող կազմակերպության նկատմամբ::

(2.10. կետը խմբ. 12.06.07 N 181-Ն)

2.11. Իրական արժեք՝ այն գումարն է, որով ակտիվն առևտրային գործարքի ընթացքում կարող է փոխանակվել իրազեկ և պատրաստակամ կողմերի միջև:

2.12. Փոխհատուցվող գումար՝ ակտիվի վաճառքի զուտ գին կամ օգտագործման արժեք (նայած թե որն է նրանցից առավելագույնը):

2.13. Օգտագործման արժեք՝ դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի ներկա արժեքը, որոնց առաջացումն ակնկալվում է ակտիվի շարունակական օգտագործումից և օտարումից՝ նրա օգտակար ծառայության վերջում:

2.14. Գուդվիլի արժեք՝ ձեռքբերման գործարքի ամսաթվի դրությամբ (կամ մինչև ձեռքբերումը փոխանակման գործարքների ամսաթվերի դրությամբ, եթե ձեռքբերումը իրականացվում է բաժնետոմսերի հաջորդական ձեռքբերումների արդյունքում) ձեռք բերված որոշելի ակտիվների և պարտավորությունների իրական արժեքում ձեռք բերողի բաժնեմասը (շահը) գերազանցող ձեռքբերման արժեքի մեծություն:

2.15. Բացասական գուդվիլի արժեք՝ ձեռքբերման գործարքի ամսաթվի դրությամբ (կամ մինչև ձեռքբերումը փոխանակման գործարքների ամսաթվերի դրությամբ, եթե ձեռքբերումն իրականացվում է բաժնետոմսերի հաջորդական ձեռքբերումների արդյունքում) ձեռքբերման արժեքի նկատմամբ ձեռք բերված որոշելի ակտիվների և պարտավորությունների իրական արժեքում ձեռք բերողի բաժնեմասը (շահը) գերազանցող մեծություն:

2.16. Դրամային ակտիվներ՝ պահվող դրամական միջոցներն են և այն ակտիվները, որոնց դիմաց պետք է ստացվեն հաստատուն կամ որոշելի գումարով դրամական միջոցներ:

2.17. Դրամական միջոցներ՝ կանխիկը (<< դրամ և արտարժույթ), ցպահանջ ավանդները, ազատ տնօրինման իրավունքով բանկի բանկային հաշիվներում առկա միջոցները (այդ թվում՝ թղթակցային հաշիվները):

2.18. Բաժնեմասնակցության մեթոդ՝ հաշվառման մեթոդ է, որի դեպքում ներդրումը սկզբնապես գրանցվում է ինքնարժեքով, ապա ճշգրտվում է ձեռքբերումից հետո դուստր ընկերության զուտ ակտիվներում ներդրողի բաժնեմասի փոփոխությունների չափով: Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արտացոլվում է դուստր ընկերության գործունեության արդյունքներում ներդրողի բաժնեմասը:

2.19. Տեղաբաշխում՝ ձեռքբերման ամսաթվի դրությամբ դուստր ընկերության ակտիվների և պարտավորությունների իրական ու հաշվեկշռային արժեքների տարբերություն:

2.20. Բաշխում՝ ձեռքբերման արժեքի և դուստր ընկերության հաշվեկշռային արժեքի տարբերության գումարների բաշխումը համապատասխան հաշիվներին:

2.21. Որոշելի ակտիվներ և պարտավորություններ՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտ 22-ով սահմանված որոշելի ակտիվները և պարտավորությունները:

2.22. Փակման փոխարժեք՝ փոխանակման փոխարժեքն է հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ:

2.23. Փոխանակման փոխարժեքը՝ 2 արժույթների փոխանակման հարաբերակցությունն է:

ԿԱՆՈՆ 2.1. ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏՈԿՈՍ ԵՎ ՇԱՀՈՒՅԹՈՒՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՈԿՈՍ

2.1 . Խմբի համախմբված հաշվետվությունները կազմվում են խմբի հստակ գծագրված կառուցվածքի հիման վրա՝ հիմնվելով մայր բանկի կողմից խմբի անդամներից յուրաքանչյուրի նկատմամբ հաշվարկված հսկողության տոկոսի և շահույթում մասնակցության տոկոսի վրա:

2.2 . Սույն կանոնով ներկայացվում է հսկողության տոկոսի և շահույթում մասնակցության տոկոսի հաշվարկման տեխնիկան՝ օրինակների ձևով:

Բանկը ձեռք է բերում հսկողության տոկոս.

ա) Միևնույն կապող օղակի միջոցով. եթե Ա մայր բանկն ունի 58 % մասնակցություն Բ կազմակերպությունում, և Բ կազմակերպությունն ունի 51 % մասնակցություն Գ կազմակերպությունում, ապա Գ կազմակերպությունում Ա մայր բանկի հսկողության տոկոսը կկազմի 51 % (անուղղակի Բ-ի միջոցով), իսկ շահույթում մասնակցության տոկոսը՝ 29.58 % (անուղղակի Բ-ի միջոցով՝ 58 %-ի 51 % = 29,58 %): Արդյունքում՝ Ա մայր բանկը պետք է համախմբի ինչպես Բ կազմակերպությանը, այնպես էլ՝ Գ կազմակերպությանը:

բ) Փոխադարձ կապված օղակների միջոցով. եթե Ա մայր բանկն ունի 65 % մասնակցություն Բ կազմակերպությունում և 43 % մասնակցություն Գ կազմակերպությունում, իր հերթին Գ կազմակերպությունն ունի 8 % մասնակցություն Բ կազմակերպությունում, և Բ կազմակերպությունն ունի 8 % մասնակցություն Գ

կազմակերպությունում, ապա՝

- Ա մայր բանկի հսկողության տոկոսը Բ կազմակերպության նկատմամբ կկազմի 73 % (ուղղակի՝ 65 % և անուղղակի Գ-ի միջոցով՝ 8 %), իսկ շահույթում մասնակցության տոկոսը՝ 68.44 % (ուղղակի՝ 65 % և անուղղակի Գ-ի միջոցով՝ $8 \% * 43 \% = 3.44 \%$),

- Ա մայր բանկի հսկողության տոկոսը Գ կազմակերպության նկատմամբ կկազմի 51 % (ուղղակի՝ 43 % և անուղղակի Բ-ի միջոցով՝ 8 %), իսկ շահույթում մասնակցության տոկոսը՝ 48.2 % (ուղղակի՝ 43 % և անուղղակի Բ-ի միջոցով՝ $8 \% * 65 \% = 5.2 \%$):

Արդյունքում Ա մայր բանկը պետք է համախմբի ինչպես Բ կազմակերպությանը, այնպես էլ՝ Գ կազմակերպությանը:

գ) Շրջանաձև օղակի միջոցով. եթե Ա մայր բանկն ունի 70 % մասնակցություն Բ կազմակերպությունում, և Բ կազմակերպությունն ունի 60 % մասնակցություն Գ կազմակերպությունում, իր հերթին Գ կազմակերպության մասնակցությունը Դ կազմակերպությունում 60 % է, և Դ կազմակերպության մասնակցությունը Բ կազմակերպությունում 30 % է, ապա՝

- Ա մայր բանկի հսկողության տոկոսը Բ կազմակերպության նկատմամբ կկազմի 100 % (ուղղակի՝ 70 %, անուղղակի Բ-ի, Գ-ի և Դ-ի միջոցով՝ 30 %), իսկ շահույթում մասնակցության տոկոսը՝ 88 % (ուղղակի՝ 70 % և անուղղակի Գ-ի միջոցով՝ $60 \% * 30 \% = 18 \%$),

- Ա մայր բանկի հսկողության տոկոսը Գ կազմակերպության նկատմամբ կկազմի 60 % (անուղղակի Բ-ի միջոցով՝ 60 %), իսկ շահույթում մասնակցության տոկոսը՝ 60 % (անուղղակի Բ-ի միջոցով՝ $100 \% * 60 \%$),

- Ա մայր բանկի հսկողության տոկոսը Դ կազմակերպության նկատմամբ կկազմի 60 % (անուղղակի Գ-ի միջոցով՝ 60 %), իսկ շահույթում մասնակցության տոկոսը՝ 36 % (անուղղակի Գ-ի միջոցով՝ $60 \% * 60 \%$):

Արդյունքում Ա մայր բանկը պետք է համախմբի ինչպես Բ կազմակերպությանը, այնպես էլ՝ Գ և Դ կազմակերպություններին:

դ) Փոխադարձ կապված շրջանաձև օղակի միջոցով. Ա մայր բանկն ունի 70 % մասնակցություն Բ կազմակերպությունում, և Բ կազմակերպությունն ունի 75 % մասնակցություն Գ կազմակերպությունում, իր հերթին Գ կազմակերպության մասնակցությունը Դ կազմակերպությունում 8 % է, և Դ կազմակերպության մասնակցությունը Գ կազմակերպությունում 8 % է, իսկ Բ կազմակերպությունում՝ 30 %, ապա՝

- Ա մայր բանկի հսկողության տոկոսը Բ կազմակերպության նկատմամբ կկազմի 70 % (ուղղակի՝ 70 %), իսկ շահույթում մասնակցության տոկոսը՝ 70 % (ուղղակի 70 %),

- Ա մայր բանկի հսկողության տոկոսը Գ կազմակերպության նկատմամբ կկազմի 75 % (ուղղակի՝ 0 %, անուղղակի

Բ-ի միջոցով՝ 75 %), իսկ շահույթում մասնակցության տոկոսը՝ 52.5 % (անուղղակի Բ-ի միջոցով՝ 70 % * 75 %=52.5 %),
- Ա մայր բանկի հսկողության տոկոսը Դ կազմակերպության նկատմամբ կկազմի 8 % (ուղղակի՝ 0 %, անուղղակի Բ-ի և Գ-ի միջոցով՝ 8 %) իսկ շահույթում մասնակցության տոկոսը՝ 4.2 % (անուղղակի Բ-ի և Դ-ի միջոցով՝ 75 % * 8 % * 70 % = 4.2 %):

Արդյունքում Ա մայր բանկը պետք է համախմբի ինչպես Բ կազմակերպությանը, այնպես էլ Գ կազմակերպությանը:

(Կանոն 2.1 լրաց. 12.06.07 N 181-Ն)

ԿԱՆՈՆ 3. ՀԱՄԱԽՄԲՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԱՄՍԱԹՎԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ

3.1. Համախմբված հաշվապահական և այլ հաշվետվություններում դուստր ընկերության ֆինանսական ցուցանիշները ներառվում են սկսած դուստր ընկերության ձեռքբերման պահից:

Մայր բանկի կողմից դուստր ընկերության ձեռքբերման հաշվառումը ներառում է՝

ա) ձեռքբերման արժեքի որոշումը,

բ) ձեռք բերվող դուստր կազմակերպության որոշելի (իդենտիֆիկացվող) ակտիվների և պարտավորությունների վրա ձեռքբերման արժեքի բաշխումը,

գ) բաշխման արդյունքում ստացվող գուդվիլի կամ բացասական գուդվիլի հաշվառումը՝ ինչպես ձեռքբերման պահին, այնպես էլ դրանից հետո,

դ) փոքրամասնության բաժնեմասի գումարի որոշումը,

ե) այն ձեռքբերումների հաշվառումը, որոնք կատարվում են որոշակի ժամանակի ընթացքում,

զ) ձեռքբերման արժեքի կամ որոշելի ակտիվների և պարտավորությունների հետագա փոփոխությունները:

Համախմբված հաշվետվությունները կազմելիս.

ա) խմբի յուրաքանչյուր անդամի համար հաշվարկվում է նրա նկատմամբ մայր բանկի հսկողության տոկոսը,

բ) խմբի յուրաքանչյուր անդամի համար հաշվարկվում է նրա շահույթում մայր բանկի մասնակցության տոկոսը,

գ) խմբի յուրաքանչյուր անդամի համար որոշվում է համախմբման մեթոդը:

Համախմբված հաշվետվությունները կազմելիս իրականացվում են հետևյալ քայլերը՝

ա) յուրաքանչյուր դուստր ընկերությունում մայր բանկի ներդրումների հաշվեկշռային արժեքը և նրա սեփական կապիտալում մայր բանկի բաժնեմասը բացառվում են (փոխադարձաբար մարվում են),

բ) որոշվում է համախմբված դուստր ընկերությունների հաշվետու ժամանակաշրջանի զուտ եկամտում փոքրամասնության բաժնեմասը, և ճշգրտվում են խմբի եկամուտներն այնպես, որ արդյունքում ստացվի մայր բանկի սեփականատերերին բաշխման ենթակա զուտ եկամուտը,

գ) որոշվում է համախմբված դուստր ընկերությունների զուտ ակտիվներում փոքրամասնության բաժնեմասը, և համախմբված հաշվապահական հաշվեկշռում արտացոլվում է մայր բանկի պարտավորություններից և բաժնետիրական կապիտալից առանձնացված,

դ) համախմբված հաշվետվությունների անմիջական ձևավորում:

(3.1. կետը խմբ. 12.06.07 N 181-Ն)

3.2. Դուստր ընկերությունների ձեռքբերման արժեքը իրենից ներկայացնում է դրամական միջոցներով կամ դրանց համարժեքներով վճարված գումար կամ ձեռքբերման օրվա դրությամբ այլ փոխհատուցման իրական արժեք, գումարած ձեռքբերմանը վերաբերող ուղղակի ծախսեր, որոնք են՝

ա) դուստր ընկերության ձեռքբերման նպատակով բաժնետոմսերի թողարկման և գրանցման ծախսեր,

բ) ձեռքբերման գործընթացն իրականացնելու համար հաշվապահներին, իրավաբաններին, գնահատողներին և այլ խորհրդատուներին կատարված վճարները:

Երբ ձեռքբերման փոխհատուցման գումարը հետաձգվում է, ձեռքբերման արժեքն իրենից ներկայացնում է փոխհատուցման ներկա արժեքը՝ հաշվի առնելով ցանկացած հավելավճար կամ զեղչ:

(3.2. կետը փոփ. 12.06.07 N 181-Ն)

3.3. Վարչական ծախսերն ու այն ծախսումները, որոնք ուղղակիորեն չեն վերագրվում տվյալ ձեռքբերմանը, առաջացմանը զուգընթաց ճանաչվում են որպես ծախս:

3.4. Գործարքի ժամանակ տրված դրամային ակտիվները (ներառյալ՝ ձեռք բերողի կողմից թողարկված շուկայական արժեթղթերը (բաժնետոմսերը)), դուստր ընկերության պարտավորությունների ստանձման դեպքում՝ նաև ստանձնած պարտավորությունները, չափվում են իրենց իրական արժեքով, փոխանակման գործարքի ամսաթվի դրությամբ:

Ձեռքբերման հետ կապված սպասվող ապագա կորուստները կամ ծախսերը չեն համարվում ձեռք բերողի ստանձնած պարտավորություններ և չեն ընդգրկվում ձեռքբերման արժեքի մեջ:

(3.4. կետը լրաց. 12.06.07 N 181-Ն)

3.5. Ձեռքբերման պայմանագիրը կարող է նախատեսել ապագա իրադարձություններով պայմանավորված գնման փոխհատուցման գումարի ճշգրտումներ (3*):

3.6. Սույն կարգի 3.5 կետով սահմանված դեպքում ճշգրտման գումարները պետք է հաշվառվեն ձեռքբերման

արժեքի մեջ:

3.7. Ձեռքբերման արժեքը հետագայում կարող է ճշգրտվել գուղվիլի կամ բացասական գուղվիլի վրա ազդեցությամբ.

ա) եթե ձեռքբերման պայմանագրով նախատեսված ապագա իրադարձությունները տեղի չեն ունենում,

բ) ձեռքբերման ամսաթվից հետո գնման փոխհատուցման վրա ազդեցություն ունեցող ձեռքբերման պայմանագրով չնախատեսված պայմանական դեպք է ի հայտ եկել, այնպես, որ գումարի վճարումը հավանական է, և այդ գումարը կարելի է արժանահավատորեն գնահատել:

3.8. Այն դեպքում, երբ ձեռք բերողը երաշխավորում է իր կողմից թողարկված արժեթղթերի (բաժնետոմսերի) շուկայական գինը, սակայն որոշ ժամանակ անց վերջիններիս շուկայական գինն ընկնում է, և ձեռք բերողը թողարկում է այնքան արժեթուղթ (բաժնետոմս), որպեսզի վերականգնի նախկինում որոշված ձեռքբերման գինը, գուղվիլի կամ բացասական գուղվիլի ճշգրտում չի իրականացվում: Ձեռքբերման ժամանակ թողարկված արժեթղթերի (բաժնետոմսերի) հավելավճարը կրճատվում է, կամ ավելանում է գեղչը:

3.9. Երբ ձեռքբերումն իրականացվում է բաժնետոմսերի հաջորդական գնումների եղանակով՝

ա) մինչև ձեռքբերում որակավորվելը, ներդրումները հաշվառվում են բաժնեմասնակցության մեթոդով՝ համաձայն սույն կարգի 6-րդ կանոնի, եթե գործարքը որակավորվել է որպես ներդրում ասոցիացված կազմակերպությունում: Եթե ներդրումը չի որակավորվել որպես ներդրում ասոցիացված կազմակերպությունում, ապա որոշելի ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը որոշվում է յուրաքանչյուր էական փուլի ամսաթվի դրությամբ, իսկ գուղվիլը կամ բացասական գուղվիլը ճանաչվում է ձեռքբերման ամսաթվից,

բ) յուրաքանչյուր հաջորդ ձեռքբերման ժամանակ առանձին ներդրման արժեքները համեմատվում են, և ձեռք բերողի նախկինում ունեցած բաժնեմասին վերաբերող որոշելի ակտիվները և պարտավորությունները վերագնահատվում են,

գ) ձեռքբերման արժեքը հավասար է առանձին գործարքների արժեքի հանրագումարին՝ հաշվի առնելով հաշվեկշռային արժեքի և իրական արժեքի տվյալները յուրաքանչյուր փոխանակման գործարքի ամսաթվի դրությամբ:

3.10. Ձեռքբերման ժամանակ համախմբման նպատակով, համաձայն հավելված 2.1-ի, ցույց են տրվում յուրաքանչյուր դուստր ընկերության որոշելի ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային և իրական արժեքները, ինչպես նաև յուրաքանչյուր ակտիվի և պարտավորության իրական և հաշվեկշռային արժեքների տարբերությունները՝ տեղաբաշխումները (այսուհետև՝ տեղաբաշխում):

Ձեռք բերված որոշելի ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը որոշելու ընդհանուր ուղեցույցները

ներկայացված են Հայաստանի Հանրապետության Հաշվապահական Հաշվառման ստանդարտ 22-ով:

Այնուհետև հաշվարկվում է յուրաքանչյուր ակտիվի կամ պարտավորության տեղաբաշխումներում մայր բանկի բաժնեմասը և վերջինիս տարեկան ամորտիզացիան՝ հիմք ընդունելով համապատասխան ակտիվների և պարտավորությունների օգտակար ծառայության ժամկետը: Յուրաքանչյուր ակտիվի և պարտավորության տեղաբաշխման մեջ մայր բանկի բաժնեմասի ամորտիզացիայի հիման վրա հաշվարկվում է ընդհանուր տեղաբաշխման մեջ մայր բանկի բաժնեմասի տարեկան ամորտիզացիան: Տեղաբաշխման տարեկան ամորտիզացիայի հաշվարկի մեջ ներառվում է նաև գուդվիլի (բացասական գուդվիլի) տարեկան ամորտիզացիան (հավելված 2.2-ի համաձայն):

(3.10. կետը լրաց. 12.06.07 N 181-Ն)

3.11. Ձեռքբերման ժամանակ համախմբման նպատակով իրականացվում է դուստր ընկերության համար վճարված գնի՝ ձեռքբերման արժեքի և դուստր ընկերության որոշելի զուտ ակտիվների հաշվեկշռային արժեքների տարբերության բաշխում համապատասխան հաշիվներին: Հնարավոր է վերոհիշյալ տարբերության բաշխման 3 տարբերակ.

ա) Ձեռքբերման արժեքը հավասար է դուստր ընկերության որոշելի զուտ ակտիվների իրական արժեքում մայր բանկի բաժնեմասին: Այս դեպքում ակտիվները և պարտավորությունները բաշխվում են իրենց հաշվեկշռային արժեքներով: Տեղաբաշխումը համապատասխան հաշիվներին իրականացվում է մայր բանկի ունեցած բաժնեմասին համամասնորեն:

բ) Ձեռքբերման արժեքը գերազանցում է ձեռքբերման ամսաթվի դրությամբ ձեռք բերվող ընկերության որոշելի ակտիվների իրական արժեքում մայր բանկի բաժնեմասը: Այս դեպքում դուստր ընկերության ակտիվները և պարտավորությունները համախմբվում են իրենց հաշվեկշռային արժեքներով: Տեղաբաշխումը համապատասխան հաշիվներին իրականացվում է մայր բանկի ունեցած բաժնեմասին համամասնորեն, իսկ առաջացած դրական տարբերությունը ճանաչվում է որպես ակտիվ՝ գուդվիլ:

գ) Ձեռքբերման արժեքը ցածր է ձեռքբերման ամսաթվի դրությամբ ձեռք բերվող ընկերության որոշելի ակտիվների իրական արժեքում մայր բանկի բաժնեմասից: Այս դեպքում դուստր ընկերության ակտիվները և պարտավորությունները բաշխվում են իրենց հաշվեկշռային արժեքներով: Տեղաբաշխումը համապատասխան հաշիվներին իրականացվում է մայր բանկի ունեցած բաժնեմասին համամասնորեն, իսկ առաջացած բացասական տարբերությունը ճանաչվում է որպես բացասական գուդվիլ:

3.12. 3.11 կետով սահմանված տեղաբաշխումների գումարները համախմբված հաշվեկշռում արտացոլվում են «Ճշգրտումներ» բաժնում.

ա) այն դեպքում, երբ դուստր ընկերության ակտիվի իրական արժեքը գերազանցում է հաշվեկշռային արժեքը, ապա այդ տարբերությունն արտացոլվում է դեբետային մասում.

բ) այն դեպքում, երբ դուստր ընկերության ակտիվի իրական արժեքը փոքր է հաշվեկշռային արժեքից, ապա այդ տարբերությունն արտացոլվում է կրեդիտային մասում.

գ) այն դեպքում, երբ դուստր ընկերության պարտավորության իրական արժեքը գերազանցում է հաշվեկշռային արժեքը, ապա այդ տարբերությունը արտացոլվում է կրեդիտային մասում.

դ) այն դեպքում, երբ դուստր ընկերության պարտավորության իրական արժեքը փոքր է հաշվեկշռային արժեքից, ապա այդ տարբերությունն արտացոլվում է դեբետային մասում:

Վերջիններս բացառելու նպատակով «Դուստր ընկերությունում ներդրումներ» հաշվի «Ճշգրտումներ» բաժնում արտացոլվում է ակտիվների տեղաբաշխման հանրագումարի և պարտավորությունների տեղաբաշխման հանրագումարի տարբերության գումարը:

3.13. Ձեռքբերման արժեքի տեղաբաշխումից առաջացած դրական և բացասական մնացորդները (գուդվիլ, բացասական գուդվիլ) համախմբման ժամանակ չեն հաշվանցվում և հաշվառվում են առանձին հոդվածներով՝ ըստ յուրաքանչյուր դուստր ընկերության:

3.14. Գուդվիլը հաշվառվում է համախմբված հաշվեկշռի ակտիվում՝ արտացոլվելով «Ճշգրտումներ» բաժնի դեբետային մասում: Ձեռքբերման ամսաթվի դրությամբ այն ցույց է տրվում սկզբնական արժեքով:

3.15. Գուդվիլը ամորտիզացվում է գծային մեթոդով՝ իր գործունեության օգտակար ծառայության ընթացքում: Յուրաքանչյուր ժամանակահատվածի համար հաշվարկված ամորտիզացիան պետք է ճանաչվի որպես ծախս:

(3.15. կետը խմբ. 12.06.07 N 181-Ն)

3.16. Գուդվիլի օգտակար ծառայությունը սահմանվում է՝ հաշվի առնելով այն ժամանակահատվածը, որի ընթացքում ակնկալվում է տնտեսական օգուտների ներհոսք դեպի կազմակերպություն, բայց որը չպետք է գերազանցի 20 տարի ժամանակահատվածը: Յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում մայր բանկը պետք է վերանայի գուդվիլի օգտակար ծառայության ժամկետը:

3.17. Բացասական գուդվիլը հաշվառվում է հաշվեկշռի ակտիվային մասում՝ պասիվային մնացորդով՝ արտացոլվելով համախմբված հաշվեկշռի «Ճշգրտումներ» բաժնի կրեդիտային մասում: Ձեռքբերման ամսաթվի դրությամբ այն ցույց է տրվում սկզբնական արժեքով: Իր օգտակար ծառայության ընթացքում այն դուրս է գրվում սույն կարգի 3.18-3.20 կետերով սահմանված կարգով:

3.18. Բացասական գուդվիլի այն մասը, որը վերաբերում է ձեռք բերողի ծրագրով ակնկալվող ապագա ծախսերին և վնասներին, որոնք ձեռքբերման ամսաթվի դրությամբ չեն հանդիսանում պարտավորություններ, բայց որոնք

կարելի է արժանահավատորեն գնահատել, ճանաչվում է եկամուտ այն ժամանակաշրջանում, երբ ճանաչվում են ձեռք բերողի ծրագրով նախատեսված ապագա վնասները և ծախսերը:

3.19. Եթե 3.18 կետով սահմանված ծախսերը կամ վնասները ապագայում չեն ճանաչվում, ապա՝

ա) բացասական գույվիլի գումարը, որը չի գերազանցում ձեռք բերված որոշելի ոչ դրամային ակտիվների իրական արժեքները, ճանաչվում է եկամուտ պարբերական հիմունքով՝ ձեռք բերված ամորտիզացվող որոշելի ակտիվների միջին կշռված մնացորդային օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, և՛

բ) բացասական գույվիլի գումարը, որը գերազանցում է ձեռք բերված որոշելի ոչ դրամային ակտիվների իրական արժեքները, եկամուտ է ճանաչվում անմիջապես:

3.20. Այն չափով, որով բացասական գույվիլը չի վերաբերում որոշելի ապագա ակնկալվող վնասներին և ծախսերին, որոնք ձեռքբերման ամսաթվի դրությամբ կարող են արժանահավատորեն չափվել, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում պետք է ճանաչվի որպես եկամուտ՝ համաձայն 3.19 կետի «ա» և «բ» ենթակետերի:

3.21. Ձեռք բերված այն ակտիվները և պարտավորությունները, որոնք ձեռքբերման ամսաթվին չեն բավարարել որոշելի ակտիվների և պարտավորությունների չափանիշերին, ճանաչվում են այն ժամանակ, երբ հետագայում բավարարում են նշված չափանիշերին:

3.22. Ձեռք բերված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը ճշտվում է այն ժամանակ, երբ ձեռքբերումից հետո ի հայտ է գալիս լրացուցիչ վկայություն սկզբնապես ճանաչված ակտիվների և պարտավորությունների գումարների ճշգրտման համար:

3.23. 3.21 և 3.22 կետերով սահմանված դեպքերում գույվիլին և բացասական գույվիլին վերագրված գումարները ճշգրտվում են մինչև ձեռքբերմանը հաջորդող առաջին տարեկան հաշվետու ժամանակաշրջանի վերջը, բացառությամբ այն դեպքերի, երբ ձեռքբերումից հետո 3 ամսվա ընթացքում կամ մինչև տարեկան ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթիվը (նայած թե որ ժամկետն է ավելի կարճ) լրամշակել է ծրագրի հիմնական ուղղություններն այնպես, որ ստացվել է մանրամասն ներկայացված փաստաթուղթ, որտեղ առնվազն ներկայացված են.

ա) ձեռնարկատիրական գործունեությունը կամ դրա մի մասը,

բ) այն աշխատողների աշխատավայրը, գործառույթները և մոտավոր թվաքանակը, որոնք կփոխհատուցվեն նրանց ծառայությունները դադարեցնելուց,

գ) ծախսումները, որոնք պետք է կատարվեն, և

դ) երբ է իրականացվելու ծրագիրը:

Ճշգրտումն իրականացվում է այն չափով, որ վերջինս չավելացնի գուդվիլի հաշվեկշռային արժեքն իր փոխհատուցվող գումարից: Այլապես որոշելի ակտիվների և պարտավորությունների ճշգրտումը ճանաչվում է որպես եկամուտ կամ ծախս:

3.24. Ձեռքբերման ամսաթվին յուրաքանչյուր ակտիվ և պարտավորություն իրենից ներկայացնում է մայր բանկի և դուստր ընկերության ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների հանրագումար, գումարած կամ հանած ձեռքբերման արժեքի տեղաբաշխումը, եթե ձեռքբերումն իրականացվում է 100%-ով:

3.25. Ձեռքբերման ամսաթվին յուրաքանչյուր ակտիվ և պարտավորություն իրենից ներկայացնում է մայր բանկի և դուստր ընկերության ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների հանրագումար, գումարած կամ հանած ձեռքբերման արժեքի տեղաբաշխման մեջ մայր բանկի բաժնեմասին համապատասխան գումարը, եթե ձեռքբերումը փոքր է 100%-ից, և առկա է փոքրամասնության բաժնեմաս:

3.26. Երբ դուստր ընկերության ձեռքբերումը փոքր է 100%-ից, որի արդյունքում առկա է փոքրամասնության բաժնեմաս, փոքրամասնության բաժնեմասը համախմբված ֆինանսական հաշվեկշռում արտացոլվում է մայր բանկի պարտավորություններից և կապիտալից առանձնացված և հաշվառվում է մինչև ձեռքբերումը դուստր ընկերության հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

3.27. Համախմբված հաշվեկշռում բացառվում են դուստր ընկերության կապիտալի հաշիվներն ու մայր բանկի հաշվեկշռի դուստր ընկերությունում կատարած ներդրումների հաշիվը, որոնք արտացոլվում են համախմբված հաշվեկշռի «Ճշգրտումներ» բաժնում՝ հետևյալ կերպ.

«Կապիտալ» տողի դեբետային մասում (դուստր ընկերության կապիտալի գումարի չափով)

«Դուստր ընկերությունում կատարված ներդրումներ» տողի կրեդիտային մասում (դուստր ընկերության կապիտալում մայր բանկի բաժնեմասի չափով)

«Փոքրամասնության բաժնեմաս» տողի կրեդիտային մասում (դուստր ընկերության կապիտալում փոքրամասնության բաժնեմասի չափով):

3.28. Համախմբված հաշվեկշռում բացառվում է դուստր ընկերությունում կատարված ներդրումների գծով ստեղծված պահուստաֆոնդի գումարը համապատասխան ծախսային հոդվածի հետ՝ արտացոլվելով հաշվետվությունների «Ճշգրտումներ» բաժնում:

3.29. Համախմբված եկամուտների և ծախսերի հաշվետվությունում չեն ներառվում դուստր ընկերության կողմից մինչև համախմբումն ստացված եկամուտները և ծախսերը:

3.30. Ձեռքբերման ամսաթվի դրությամբ կազմված եկամուտների և ծախսերի համախմբված հաշվետվությունում ներառվում են միայն մայր բանկի համապատասխան հոդվածների մնացորդները:

3.31. Եթե խմբի մեջ դուստր ընկերությունների հետ մեկտեղ առկա են նաև համատեղ և (կամ) ասոցիացված ընկերություններ, ապա համախմբված հաշվետվությունները կազմվում են մայր բանկի և դուստր ընկերությունների հաշվապահական հաշվետվությունների միավորման միջոցով՝ ներառելով համատեղ և (կամ) ասոցիացված ընկերություններում ներդրումները:

(3.31. կետը լրաց. 12.06.07 N 181-Ն)

ԿԱՆՈՆ 4. ՁԵՌՔԵՐՄԱՆ ԱՄՍԱԹՎԻՆ ՀԱՋՈՐԴՈՂ ՀԱՄԱԽՄԲՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

4.1. Ձեռքբերման ամսաթվին հաջորդող համախմբված հաշվեկշռում համախմբված յուրաքանչյուր ակտիվ և պարտավորություն իրենից ներկայացնում է մայր բանկի ակտիվի կամ պարտավորության՝ հաշվետու ամսաթվի դրությամբ հաշվեկշռային արժեքի և դուստր ընկերության համապատասխան ակտիվի կամ պարտավորության՝ հաշվետու ամսաթվի դրությամբ հաշվեկշռային արժեքի հանրագումար՝ գումարած կամ հանած ձեռքբերման արժեքի տեղաբաշխումը՝ հանած կամ գումարած սույն կարգի 3.10 կետի համաձայն հաշվարկված, տվյալ ակտիվի կամ պարտավորության տեղաբաշխման տարեկան ամորտիզացիան, եթե ձեռքբերումը 100%-ով է:

4.2. Ձեռքբերման ամսաթվին հաջորդող համախմբված հաշվեկշռում համախմբված յուրաքանչյուր ակտիվ և պարտավորություն իրենից ներկայացնում է մայր բանկի ակտիվի կամ պարտավորության՝ հաշվետու ամսաթվի դրությամբ հաշվեկշռային արժեքի և դուստր ընկերության համապատասխան ակտիվի կամ պարտավորության՝ հաշվետու ամսաթվի դրությամբ հաշվեկշռային արժեքի հանրագումար՝ գումարած կամ հանած ձեռքբերման արժեքի տեղաբաշխման մեջ մայր բանկի ունեցած բաժնեմասը՝ հանած կամ գումարած սույն կարգի 3.10 կետի համաձայն հաշվարկված, տվյալ ակտիվի կամ պարտավորության տեղաբաշխման տարեկան ամորտիզացիան, եթե ձեռքբերումը փոքր է 100%-ից, և առկա է փոքրամասնության բաժնեմաս:

4.3. Տեղաբաշխումների տարեկան ամորտիզացիան արտացոլվում է եկամուտների և ծախսերի հաշվետվության «Ծախսեր» հոդվածի «Ճշգրտումներ» բաժնում:

4.4. Համախմբված հաշվեկշիռը (հավելված 2) լրացնելիս ոչ բանկ ֆինանսական դուստր ընկերությունների ցուցանիշերը համախմբված հաշվեկշռի հոդվածներում ներառվում են՝ ելնելով իրենց տնտեսագիտական նշանակությունից: Օրինակ՝ համախմբված հաշվեկշռի «Թղթակցային հաշիվներ ռեզիդենտ բանկերում» կամ «Թղթակցային հաշիվներ ոչ ռեզիդենտ բանկերում» հոդվածներում ներառվում են ոչ բանկ դուստր ֆինանսական ընկերության հաշվարկային հաշիվների մնացորդները համապատասխանաբար ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ բանկերում:

Այն դեպքում, երբ ֆինանսական դուստր ընկերության որևէ ակտիվ կամ պարտավորություն, կախված վերջինիս գործունեության բնույթից, չի ներառվում համախմբված հաշվեկշռի համապատասխան հոդվածների մեջ, ապա դրանք արտացոլվում են «Դուստր ընկերության այլ ակտիվներ» և «Դուստր ընկերության այլ պարտավորություններ» հոդվածներում:

4.5. Համախմբված հաշվեկշռում ներառվում է ձեռքբերման ամսաթվին դուստր ընկերության ձեռքբերման համար վճարված գնի և ձեռքբերման ամսաթվին դուստր ընկերության իրական արժեքում մայր բանկի բաժնեմասի միջև եղած տարբերության ցուցանիշը (գուդվիլ, բացասական գուդվիլ), որը հաշվարկվում է սույն կարգի 3.13-3.20 հոդվածներով սահմանված կարգով: Գուդվիլը և բացասական գուդվիլը համախմբված հաշվեկշռում հաշվառվում են սկզբնական արժեքով՝ նվազեցված տարեկան ամորտիզացիայի գումարի և արժեզրկումից կորուստների գումարի չափով, որոնք արտացոլվում են համախմբված հաշվեկշռի «Ճշգրտումներ» բաժնի համապատասխանաբար կրեդիտային և դեբետային մասերում:

4.6. Դուստր ընկերության զուտ ակտիվներում փոքրամասնության բաժնեմասը համախմբված հաշվեկշռում արտացոլվում է մայր բանկի պարտավորություններից և կապիտալից առանձնացված: Դուստր ընկերության զուտ ակտիվներում փոքրամասնության բաժնեմասը բաղկացած է.

- դուստր ընկերության ձեռքբերման ամսաթվի դրությամբ, սույն կարգի 3.26 կետի համաձայն հաշվարկված, փոքրամասնության բաժնեմասին համապատասխանող գումարից,

- ձեռքբերման ամսաթվից հետո դուստր ընկերության սեփական կապիտալի փոփոխության նկատմամբ հաշվարկված փոքրամասնության բաժնեմասին համապատասխանող գումարից:

4.7. Համախմբված հաշվեկշռում բացառվում են դուստր ընկերության կապիտալում մայր բանկի ներդրումների հաշվեկշռային արժեքը և մայր բանկի հաշվեկշռի դուստր ընկերությունում կատարած ներդրումների հաշվեկշռային արժեքը 4*)՝ արտացոլվելով համախմբված հաշվեկշռի «Ճշգրտումներ» բաժնում՝ հետևյալ կերպ.

«Կապիտալ» տողի դեբետային մասում (դուստր ընկերության կապիտալի գումարի չափով)

«Դուստր ընկերությունում կատարված ներդրումներ» տողի կրեդիտային մասում (դուստր ընկերության կապիտալում մայր բանկի բաժնեմասի չափով)

«Փոքրամասնության բաժնեմաս» տողի կրեդիտային մասում (դուստր ընկերության կապիտալում փոքրամասնության բաժնեմասի չափով):

4.8. Համախմբված հաշվեկշռում բացառվում է դուստր ընկերությունում կատարված ներդրումների գծով ստեղծված պահուստաֆոնդի գումարը համապատասխան ծախսային հոդվածի հետ՝ արտացոլվելով հաշվետվությունների «Ճշգրտումներ» բաժնում:

4.9. Համախմբված հաշվեկշռում բացառվում են մայր բանկի և դուստր ընկերության ինչպես նաև դուստր ընկերությունների միջև իրականացված հաշվարկների մնացորդները, վերջիններիս միջև կատարված գործառնությունները, այդ գործառնությունների հետևանքով առաջացած չիրացված շահույթները և վնասները՝ բացառությամբ չփոխհատուցվող ծախսումների՝ արտացոլվելով համախմբված հաշվեկշռի «Ճշգրտումներ» բաժնում:

(4.9. կետը լրաց. 12.06.07 N 181-Ն)

4.10. Եկամուտների և ծախսերի համախմբված հաշվետվության կազմման ժամանակ մայր բանկի և դուստր ընկերությունների եկամուտներն ու ծախսերը համախմբվում են ըստ համապատասխան հոդվածների:

4.11. Այն դեպքում, երբ դուստր ընկերությունների որևէ եկամուտ կամ ծախս, կախված իրենց գործունեության բնույթից, չեն ներառվում համախմբված եկամուտների և ծախսերի հաշվետվության համապատասխան հոդվածների մեջ, ապա վերջիններս արտացոլվում են «Դուստր ընկերությունների ստացված այլ եկամուտներ» և «Դուստր ընկերությունների այլ ծախսեր» հոդվածներում:

4.12. Համախմբված եկամուտներն իրենցից ներկայացնում են մայր բանկի և դուստր ընկերության եկամուտների հանրագումար, անկախ դուստր ընկերությունում մայր բանկի ունեցած բաժնեմասից՝ ավելացրած տեղաբաշխումների ամորտիզացիայի հանրագումարը, եթե ձեռքբերման գինը ցածր է հաշվեկշռային արժեքից:

4.13. Համախմբված ծախսերն իրենցից ներկայացնում են մայր բանկի և դուստր ընկերության ծախսերի հաշվեկշռային արժեքների հանրագումար, անկախ դուստր ընկերությունում մայր բանկի ունեցած բաժնեմասից՝ ավելացրած տեղաբաշխումների ամորտիզացիայի հանրագումարը:

4.14. Եկամուտների և ծախսերի համախմբված հաշվետվությունում բացառվում են այն եկամուտներն ու ծախսերը, որոնք առաջացել են մայր բանկի և դուստր ընկերության ինչպես նաև դուստր ընկերությունների միջև կատարված գործարքների հետևանքով՝ արտացոլվելով համախմբված հաշվետվության «Ճշգրտումներ» բաժնում:

(4.14. կետը լրաց. 12.06.07 N 181-Ն)

4.15. Եկամուտների և ծախսերի համախմբված հաշվետվությունում բացառվում է մայր բանկի առանձին հաշվետվությունում առկա «Դուստր ընկերությունից ստացված շահույթ» հոդվածը՝ արտացոլվելով համախմբված հաշվետվության «Ճշգրտումներ» բաժնում՝ հետևյալ կերպ.

«Դուստր ընկերությունից ստացված շահույթ» տողի դեբետային մասում

«Ներդրումներ դուստր ընկերությունում» տողի կրեդիտային մասում:

Վնասի դեպքում՝

«Ներդրումներ դուստր ընկերությունում» տողի դեբետային մասում

«Դուստր ընկերությունից ստացված շահույթ» տողի կրեդիտային մասում:

4.16. Եկամուտների և ծախսերի համախմբված հաշվետվության «Վճարված շահաբաժիններ» տողում չեն ներառվում դուստր ընկերության կողմից վճարված շահաբաժինները՝ արտացոլվելով համախմբված հաշվետվության «Ճշգրտումներ» բաժնում՝ հետևյալ կերպ.

Համախմբված հաշվեկշռի «Դուստր ընկերությունում ներդրումներ» տողի դեբետային մասում

Եկամուտների և ծախսերի համախմբված հաշվետվության «Վճարված շահաբաժիններ» տողի կրեդիտային մասում:

Դուստր ընկերության կողմից մայր բանկին և միմյանց, ինչպես նաև մայր բանկի կողմից իր դուստր ընկերություններին փոքրամասնությանը վճարված շահաբաժինները եկամուտների և ծախսերի համախմբված հաշվետվությունում ցույց են տրվում «Փոքրամասնության բաժնեմաս» սյունակում:

(4.16. կեդր լրաց. 12.06.07 N 181-Ն)

4.17. Դուստր ընկերության եկամուտներում և ծախսերում փոքրամասնության բաժնեմասը ցույց է տրվում «Փոքրամասնության բաժնեմաս» սյունակում: Եկամուտների և ծախսերի համախմբված ֆինանսական հաշվետվությունում փոքրամասնության բաժնեմասը ցույց է տրվում որպես նվազեցում համախմբված զուտ շահույթից:

4.18. Եթե դուստր ընկերությունն ունի չմարված կուտակային արտոնյալ բաժնետոմսեր, որոնք պատկանում են այլ ներդրողներին, ապա մայր բանկը շահույթի կամ վնասի իր բաժինը հաշվառում է՝ ճշգրտելով դուստր ընկերության արտոնյալ բաժնետոմսերով վճարվող շահաբաժինների գումարը, անկախ նրանից, նման շահաբաժինները հայտարարվել են, թե ոչ:

4.19. Այն դեպքում, երբ դուստր ընկերության փոքրամասնությանը վերագրվող վնասները գերազանցում են տվյալ ընկերության կապիտալում փոքրամասնության բաժնեմասը, այդ գերազանցումը և հետագա կորուստները հատուցվում են մայր բանկի կողմից, բացառությամբ այն մասի, որի մարման պարտավորությունը կրում է փոքրամասնությունը և ի վիճակի է կատարել այն: Եթե հետագայում դուստր ընկերությունը շահույթ է ստանում, ապա այն բաշխվում է մայր բանկի բաժնեմասին, մինչև նախորդ ժամանակաշրջանում փոքրամասնությանը վերագրված վնասների մարման արդյունքում կրած կորուստների վերականգնումը:

4.20. Համախմբված շահույթն իրենից ներկայացնում է համախմբված եկամուտների և համախմբված ծախսերի տարբերություն՝ նվազեցված դուստր ընկերության շահույթում փոքրամասնության բաժնեմասի գումարի չափով:

4.21. Համախմբված չբաշխված շահույթը հաշվարկվում է՝ նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համախմբված չբաշխված շահույթի և հաշվետու ժամանակաշրջանի համախմբված շահույթի հանրագումարից հանելով հաշվետու ժամանակաշրջանի համախմբված վճարված շահաբաժինները:

ԿԱՆՈՆ 5. ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԴՈՒՍՏՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԽԱՄՔՈՒՄԸ

5.1. Արտերկրում գործող դուստր ընկերությունների ֆինանսական հաշվետվությունների համախմբումն իրականացվում է սույն կարգով սահմանված համախմբման ընթացակարգով:

5.2. Արտերկրում գործող դուստր ընկերությունների ֆինանսական հաշվետվությունների համախմբման նպատակով մայր բանկը պետք է վերահաշվարկի դուստր ընկերության ֆինանսական ցուցանիշերը՝ վերջիններս ներկայացնելով ՀՀ արժույթով:

5.3. Արտերկրում գործող դուստր ընկերության ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են փակման փոխարժեքով:

5.4. Արտերկրում գործող դուստր ընկերության եկամուտների և ծախսերի հոդվածները վերահաշվարկվում են գործառնական օրվա փոխարժեքով:

5.5. Գերսղաճային տնտեսության երկրի արժույթով ֆինանսական հաշվետվություններ ներկայացնող դուստր ընկերության եկամուտների և ծախսերի հոդվածները վերահաշվարկվում են փակման փոխարժեքով:

5.6. Արտերկրում գործող դուստր ընկերության ֆինանսական հաշվետվությունների վերահաշվարկման արդյունքում առաջացած բոլոր փոխարժեքային տարբերությունները դասակարգվում են որպես սեփական կապիտալ:

5.7. Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են արտերկրում գործող դուստր ընկերությունների հետ ներխմբային դրամային հոդվածներով գործարքների բացառման հետևանքով, համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչվում են որպես սեփական կապիտալ:

5.8. Երբ դուստր ընկերության ձեռքբերումը փոքր է 100%-ից, փոքրամասնությանը վերաբերող փոխարժեքային տարբերությունը համախմբված հաշվեկշռում ներկայացվում է որպես փոքրամասնության բաժնեմաս:

ԿԱՆՈՆ 6. ՄԱՅՐ ԲԱՆԿԻ ԱՌԱՆՁԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

6.1. Մայր բանկն իր առանձին ֆինանսական հաշվետվություններում «Դուստր ընկերությունում ներդրումներ» հաշիվը դուստր ընկերության ձեռքբերման ամսաթվից հաշվառում է բաժնեմասնակցության մեթոդով:

6.2. Դուստր ընկերությունում ներդրումը մայր բանկի առանձին ֆինանսական հաշվետվությունում սկզբնապես գրանցվում է ձեռքբերման արժեքով:

6.3. Մայր բանկի առանձին ֆինանսական հաշվետվությունում դուստր ընկերությունում ներդրումների հաշվեկշռային արժեքը նվազեցվում է դուստր ընկերությունից ստացված շահաբաժինների չափով:

6.4. Մայր բանկի առանձին ֆինանսական հաշվետվությունում դուստր ընկերությունում ներդրման հաշվեկշռային արժեքը (փոխանցվող գումար) ավելացվում կամ նվազեցվում է ձեռքբերման ամսաթվից հետո դուստր ընկերության զուտ շահույթներում կամ վնասներում (դուստր ընկերության եկամուտներ-դուստր ընկերության ծախսեր) մայր բանկի ունեցած բաժնեմասի չափով:

6.5. Մայր բանկի առանձին ֆինանսական հաշվետվությունում դուստր ընկերությունում ներդրումների հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է դուստր ընկերության ոչ դրամային ակտիվների հաշվեկշռային արժեքով հաշվարկված մաշվածության գումարի և վերջիններիս իրական արժեքով հաշվարկված մաշվածության գումարի տարբերությունում մայր բանկի բաժնեմասի չափով՝ տեղաբաշխման տարեկան ամորտիզացիայի գումարի չափով:

6.6. Մայր բանկի «Դուստր ընկերությունում ներդրումներ» հաշիվը ճշգրտվում է մայր բանկի և դուստր ընկերության միջև իրականացված գործարքների հետևանքով առաջացած չիրացված շահույթի կամ վնասի չափով, դուստր ընկերությունում մայր բանկի ունեցած բաժնեմասի հիման վրա:

6.7. Մայր բանկի առանձին ֆինանսական հաշվետվությունում «Դուստր ընկերությունում ներդրումներ» հաշվի հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է դուստր ընկերության սեփական կապիտալում մայր բանկի ունեցած բաժնեմասի չափով դուստր ընկերության սեփական կապիտալի այնպիսի փոփոխությունների հետևանքով, որոնց արդյունքները չեն ներառվել դուստր ընկերության ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ: Այդպիսի փոփոխություններ են՝ հիմնական միջոցների, ֆինանսական ակտիվների վերագնահատումներից առաջացած տարբերությունները:

6.8. Մայր բանկի առանձին ֆինանսական հաշվետվություններում մայր բանկի զուտ շահույթը իրենից ներկայացնում է մայր բանկի եկամուտների և ծախսերի տարբերություն՝ նվազեցված շահույթից զուտ մասհանումների գումարի չափով, և դուստր ընկերությունից ստացված եկամուտի 5*) հանրագումար:

6.9. Դուստր ընկերության շահույթներում կամ վնասներում մայր բանկի բաժինն առանձին ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում պետք է բացահայտվի առանձին հոդվածով:

6.10. 1.4 կետում սահմանված դուստր ընկերություններում ներդրումները, որոնք բանկը չի համախմբում, պետք է հաշվառվեն որպես ֆինանսական ակտիվներ՝ համաձայն ՀՀՀՀՍ 39 «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ստանդարտի:

(6.10. կետը լրաց. 12.06.07 N 181-Ն)

ԿԱՆՈՆ 7. ՄԱՅՐ ԲԱՆԿԻ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

7.1. Բանկերը ՀՀ կենտրոնական բանկ են ներկայացնում խմբի համախմբված հաշվետվությունները, ներառյալ.

ա) խմբի մասնակիցների մասին հաշվետվությունը (հավելված 1),

բ) համախմբված հաշվեկշիռը (հավելված 2),

գ) ֆինանսական արդյունքների՝ եկամուտների և ծախսերի համախմբված հաշվետվությունը (հավելված 3),

դ) արտարժույթային դիրքերի վերաբերյալ համախմբված հաշվետվություն (հավելված 4),

ե) Ն1, Ն21, Ն22, Ն31, Ն32, Ն41, Ն42 և ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվների վերաբերյալ համախմբված հաշվետվությունը,

զ) Ն31 և Ն32 նորմատիվների հաշվարկի մեջ ընդգրկվող ցուցանիշների հաշվարկի վերաբերյալ համախմբված հաշվետվությունը:

(7.1 կետը խմբ., լրաց. 12.06.07 N 181-Ն, փոփ., խմբ. 21.12.10 թիվ 340-Ն)

7.2 Սույն կարգի 7.1-րդ կետում նշված հաշվետվությունները ՀՀ կենտրոնական բանկ են ներկայացվում ամսական կտրվածքով՝ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 15-րդ օրացուցային օրը (ներառյալ): Մայր բանկը սույն հաշվետվությունները ներկայացնելու համար դուստր ընկերությունից պարտավոր է ստանալ դուստր ընկերության ամսական հաշվետվությունները և համախմբման համար անհրաժեշտ այլ տվյալներ:

Սույն կարգի 7.1-րդ կետի «ա», «բ» և «գ» ենթակետերով սահմանված հաշվետվությունները ՀՀ կենտրոնական բանկ են ներկայացվում նաև տարեկան կտրվածքով՝ մինչև հաշվետու ժամանակաշրջանին (հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը) հաջորդող տարվա ապրիլի 15-րդ օրացուցային օրը (ներառյալ):

(7.2 կետը փոփ. 12.06.07 N 181-Ն, խմբ. 21.12.10 թիվ 340-Ն)

7.3. ՀՀ կենտրոնական բանկ համախմբված հաշվետվություններ ներկայացնելու փաստից անկախ, բանկերը շարունակելու են ներկայացնել ՀՀ ԿԲ «Կանոնակարգ 3»-ով սահմանված հաշվետվությունները:

7.4. ՀՀ ԿԲ «Կանոնակարգ 2»-ի գլուխ 4-ով սահմանված նորմատիվային դաշտը կիրառվում է մայր բանկի նկատմամբ՝ հիմք ընդունելով բանկի համախմբված հաշվետվությունները:

(7.4 կետը փոփ. 06.07.05 N 334-Ն)

7.5 «Արտարժույթային դիրքերի վերաբերյալ» հաշվետվությունը պետք է լրացնել՝ առաջնորդվելով «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ի ձև թիվ 7 հաշվետվության լրացման մեկնաբանություններով, իսկ «Ն11, Ն12, Ն21, Ն22, Ն31, Ն32, Ն41, Ն42 և ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվների վերաբերյալ» և «Ն31 և Ն32 նորմատիվների հաշվարկի մեջ ընդգրկվող միջին

ցուցանիշների հաշվարկի վերաբերյալ» համախմբված հաշվետվությունները պետք է ներկայացնել «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2001 թվականի մայիսի 31-ի թիվ 146-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ի»՝ համապատասխանաբար ձև թիվ 3 և ձև թիվ 14 հաշվետվությունների ձևերին և լրացման մեկնաբանություններին համապատասխան:

(7.5 կետը փոփ. 06.07.05 N 334-Ն, խմբ. 12.06.07 N 181-Ն, 21.12.10 թիվ 340-Ն)

- 1*) Բանկի կողմից դուստր և ասոցիացված ընկերություններում ներդրումների հաշվառումը, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման և ներկայացման ընթացակարգը կարգավորվում է ՀՀՀՀՀՀ 21 «Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները», ՀՀՀՀՀՀ 22 «Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ», ՀՀՀՀՀՀ 27 «Համախմբված ֆինանսական հաշվետվություններ և դուստր ընկերություններում ներդրումների հաշվառում», ՀՀՀՀՀՀ 28 «Ասոցիացված կազմակերպություններում ներդրումների հաշվառում», ՀՀՀՀՀՀ 36 «Ակտիվների արժեզրկում» ստանդարտներով և վերոնշյալ ստանդարտներում համապատասխան հղումներ ունեցած այլ ստանդարտներով, այնքանով որքանով չեն հակասում սույն կարգի դրույթներին:
- 2*) Սա վերաբերում է այն դեպքերին, երբ դուստր ընկերությունը չի վերահսկվում մայր բանկի կողմից: Օրինակ՝ սնանկացման վարույթում գտնվող դուստր ընկերության փաստացի վերահսկողությունը դրվում է պետական կառույցների վրա:
- 3*) Նշված ճշգրտումները վերաբերում են այնպիսի ապագա իրադարձությունների արդյունքում դուստր ընկերության ձեռքբերման գնի փոփոխությանը, որոնք ձեռքբերման օրվա դրությամբ հնարավոր է կանխատեսել և արժանահավատորեն չափել: Օրինակ՝ դուստր ընկերության թողարկած արժեթղթերի շուկայական գնի անկում, դուստր ընկերության նկատմամբ վարվող դատավարության արդյունքում կանխատեսվող տույժեր, տուգանքներ և այլն:
- 4*) Դուստր ընկերության ակտիվների վերագնահատման դեպքում համախմբման ժամանակ բացառվում են մայր բանկի հաշվեկշռի՝ դուստր ընկերությունում կատարած ներդրումների նոր՝ վերագնահատված հաշվեկշռային արժեքը, դուստր ընկերության կապիտալում մայր բանկի ներդրումների հաշվեկշռային արժեքը և դուստր ընկերության համապատասխան ակտիվի և պարտավորությունների վերագնահատումից գոյացած

վերագնահատման պահուստի գումարը:

- 5*) Դուստր ընկերությունից ստացված եկամուտը իրենից ներկայացնում է դուստր ընկերության զուտ շահույթում (եկամուտներ-ծախսեր) մայր բանկի բաժնեմասը՝ նվազեցրած տեղաբաշխմանը վերագրված տարեկան ամորտիզացիայի գումարի չափով:

ԽՄԲԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Առ _____ 200_ թ.

Մայր բանկի անվանումը _____

Մայր բանկի իրավաբանական հասցեն _____

Մայր բանկի գտնվելու վայրը (փոստային հասցեն) _____

- 1. Ներկայացնել խմբի իրավական կառուցվածքը և կազմը:
- 2. Ներկայացնել աղյուսակում պահանջվող հետևյալ տեղեկատվությունը խմբի մասնակիցների վերաբերյալ.

N	Խմբի մասնակից ընկերության իրավաբանական անվանումը	Խմբի մասնակից ընկերության իրավաբանական հասցեն	Խմբի մասնակից ընկերության գործունեության բնույթը	Խմբի մասնակից լինելու հիմքերը, մասնակից դառնալու ամսաթիվը	Խմբի մասնակցի նկատմամբ հսկողության տոկոսը, այդ թվում՝ ա) ուղղակի բ) անուղղակի՝	Խմբի մասնակցի շահույթում մասնակցության տոկոսը	Ընտրված համախմբման մեթոդը ²
I	II	III	IV	V	VI	VII	VIII

3. Ներկայացնել աղյուսակում պահանջվող հետևյալ տեղեկատվությունը այն դուստր ընկերությունների վերաբերյալ, որոնք ներառվել են համախմբված հաշվետվություններում.

N	Մասնակից դուստր ընկերության իրավաբանական անվանումը	Դուստր ընկերության կանոնադրական կապիտալի չափը (հազ. դրամ)	Մայր բանկի բաժնեմասը դուստր ընկերության՝ ծայնի իրավունք տվող բաժնետոմսերում (%)	Դուստր ընկերության ընդհանուր ակտիվները	Դուստր ընկերության ընդհանուր պարտավորությունները	Դուստր ընկերության զուտ շահույթը (վնասը)	Խմբի ֆինանսական վիճակի վրա ազդեցությունը
I	II	III	IV	V	VI	VII	VIII

4. Ներկայացնել աղյուսակում պահանջվող հետևյալ տեղեկատվությունը խմբի կազմի մեջ մտնող այն դուստր ընկերությունների վերաբերյալ, որոնք չեն ներառվել համախմբված հաշվետվություններում և նշել չհամախմբման հիմքերը.

N	Մասնակից դուստր ընկերության իրավաբանական անվանումը	Դուստր ընկերության կանոնադրական կապիտալի չափը (հազ. դրամ)	Մայր բանկի բաժնեմասը դուստր ընկերության՝ ծայնի իրավունք տվող բաժնետոմսերում (%)	Դուստր ընկերության ընդհանուր ակտիվները	Դուստր ընկերության ընդհանուր պարտավորությունները	Դուստր ընկերության զուտ շահույթը (վնասը)	Չհամախմբման հիմքերի նկարագրությունը
I	II	III	IV	V	VI	VII	VIII

¹ Նշվում է այն օղակի անվանումը, որի միջոցով ձեռք է բերվել անուղղակի հսկողությունը:

2 Եթե մասնակիցը չի ներառվում համախմբման մեջ, ապա այս տողում լրացվում են «չի համախմբվում» բառերը:

5. Ներկայացնել աղյուսակում պահանջվող հետևյալ տեղեկատվությունը խմբի կազմի մեջ մտնող համատեղ կամ ասոցիացված ընկերությունների վերաբերյալ.

N	Համատեղ կամ ասոցիացված ընկերության իրավաբանական անվանումը	Համատեղ կամ ասոցիացված ընկերության կանոնադրական կապիտալի չափը (հազ. դրամ)	Մայր բանկի բաժնեմասը համատեղ կամ ասոցիացված ընկերության՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերում (%)	Համատեղ կամ ասոցիացված ընկերությունում ներդրման սկզբնական արժեքը	Համատեղ կամ ասոցիացված ընկերության զուտ ակտիվներում մայր բանկի բաժնեմասի փոփոխությունները	Դուստր ընկերության զուտ շահույթը (վնասը)	Համատեղ կամ ասոցիացված ընկերություններից մայր բանկին վճարված (վճարվելիք) շահաբաժինները
I	II	III	IV	V	VI	VII	VIII

6. Ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը հաշվետու ժամանակաշրջանում մայր բանկի կողմից դուստր, համատեղ, ասոցիացված կազմակերպություններում ձեռք բերված յուրաքանչյուր մասնակցության վերաբերյալ՝

- 1) կազմակերպության անվանումը և նկարագրությունը (գործունեության բնույթը, հիմնական ֆինանսական ցուցանիշները),
- 2) մասնակցության ձեռքբերման ամսաթիվը,
- 3) մասնակցության ձեռքբերման նպատակը, հիմնական պայմանները և կարգը, մասնակցության ձեռքբերման ֆինանսական արդյունքները, այդ թվում՝ եթե մասնակցությունը ձեռք է բերված վարկի (փոխառության) միջոցով, ապա այդ վարկի (փոխառության) պայմանները՝ գումարը, տոկոսադրույքը, մարման պայմանները և ժամկետները, ապահովվածության նկարագրությունը,
- 4) ձեռք բերված ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տոկոսը,
- 5) գործունեության այն տեսակների նկարագրությունը, որոնցից ձեռք բերողը նախատեսում է հրաժարվել ձեռքբերման արդյունքում,

6) ձեռք բերվող կազմակերպության հետագա գործունեությանը վերաբերող մայր բանկի հայտարարությունները (առկայության դեպքում)՝ ակտիվների վաճառքի, այլ կազմակերպության հետ միաձուլման կամ ձեռք բերվող կազմակերպության կառավարման, կամ գործունեության մեջ նախատեսվող էական փոփոխությունների վերաբերյալ,

7) եթե մասնակցությունը ձեռք է բերված այլ կազմակերպության կանոնադրական կապիտալում մասնակցության միջոցով, ապա տեղեկություններ այդ կազմակերպության վերաբերյալ՝ անվանումը, գործունեության վայրը, գործունեության բնույթը, մասնակցության չափը, այլ,

8) եթե մասնակցության ձեռքբերման միջոցով մասնակցություն է ձեռք բերվում այլ կազմակերպություններում, ապա տեղեկություններ այդ կազմակերպությունների վերաբերյալ՝ անվանումը, գործունեության վայրը, գործունեության բնույթը, մասնակցության չափը, այլ,

9) մասնակցության ձեռքբերման արժեքը, այդ թվում՝ արժեքին վերագրվող յուրաքանչյուր բաղկացուցչի արժեքը, նկարագրությունը: Ընդ որում, եթե որպես մասնակցության ձեռքբերման արժեքի մաս թողարկվում են կամ ենթակա են թողարկման կապիտալի գործիքներ, ապա լրացուցիչ բացահայտվում են՝

ա. թողարկված կամ թողարկման ենթակա կապիտալի գործիքների (բաժնետոմսերի) քանակը.

բ. այդ գործիքների իրական արժեքը, ինչպես նաև իրական արժեքի որոշման մեթոդը: Եթե փոխանակման գործարքի դրությամբ այդ գործիքները չեն ունեցել հրապարակային գին, ապա բացահայտվում են այն կարևոր ենթադրությունները, որոնք ընկած են իրական արժեքի որոշման հիմքում.

10) ձեռք բերված ակտիվների և պարտավորությունների յուրաքանչյուր դասի իրական արժեքի գնահատման ժամանակ մայր բանկի կողմից օգտագործվող մեթոդներն ու գնահատումները (էական վարկածները (ենթադրությունները)՝

ա. արդյո՞ք իրական արժեքը որոշվում է շուկայական գնանշումների, թե՞ գնահատման մոդելների հիման վրա,

բ. եթե իրական արժեքը որոշվում է գնահատման մոդելի հիման վրա, ապա ինչպիսի՞ ենթադրություններ են ընկած գնահատման մոդելի հիմքում,

գ. արդյո՞ք գնահատման մոդելը օգտագործում է այնպիսի ենթադրություններ, որոնք հիմնված չեն շուկայական գների և փոխարժեքների վրա,

դ. տեղեկատվություն այն ֆինանսական գործիքների վերաբերյալ, որոնց իրական արժեքը հնարավոր չէ հավաստիորեն որոշել, այդ թվում՝ պատճառների բացատրությունը (թե ինչու հնարավոր չէ հավաստիորեն որոշել այդ ակտիվների իրական արժեքը), նկարագրությունն այն մասին, թե բանկն ինչպես է մտադրված տնօրինել այդ ակտիվները,

11) եթե առկա է դրական գուղվիլ, ապա այն բոլոր գործոնների բնույթը և նկարագրությունը, որոնք հանգեցրել են

այդ գուդվիլի առաջացմանը,

12) եթե առկա է բացասական գուդվիլ, ապա այն բոլոր պատճառները, որոնք հանգեցրել են բացասական գուդվիլի առաջացմանը,

13) եթե ձեռքբերումը սկզբնապես հաշվառվում է նախնական հաշվառման հիման վրա, այսինքն՝ ձեռք բերվող որոշելի ակտիվների, պարտավորությունների և պայմանական պարտավորությունների իրական արժեքները, ինչպես նաև ձեռքբերման արժեքը հնարավոր է եղել որոշել միայն նախնական գնահատումների հիման վրա, ապա այդ փաստի բացահայտումը՝ պատճառների բացատրությամբ,

14) այն ամբողջ տեղեկատվությունը՝ կապված հսկողության (ազդեցության) ձեռքբերման հետ՝

ա. պայմանագրի հիման վրա,

բ. իրավասությունների լիազորման հիման վրա (լիազորման մանրամասն նկարագրությամբ),

գ. օրենքով չարգելված այլ հիմքով:

7. Ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը հաշվետու ժամանակաշրջանում մայր բանկի կողմից ձեռքբերումների հաշվառման մեջ կատարված սխալների ճշտման և այլ ուղղումների վերաբերյալ.

1) եթե ձեռքբերումը սկզբնապես հաշվառվել է նախնական հաշվառման հիման վրա, ապա բացահայտվում են նախնական գնահատումների հետագա բոլոր ճշգրտումները՝ որոնք ճանաչվում են ձեռքբերմանը հաջորդող 12 ամսվա ընթացքում, այդ ճշգրտումների պատճառները, նրանց ազդեցությունը դրական (բացասական) գուդվիլի վրա,

2) ձեռք բերվող որոշելի ակտիվներին, պարտավորություններին կամ պայմանական պարտավորություններին վերաբերող էական սխալների ուղղումների վերաբերյալ, ինչպես պահանջում է ՀՀՀՀՍ 8-ը:

8. Ներկայացնել տեղեկատվություն հաշվետու ժամանակաշրջանում յուրաքանչյուր ձեռքբերման հետ կապված գուդվիլի փոփոխությունների վերաբերյալ.

1) հաշվետու ժամանակաշրջանի սկզբում գուդվիլի՝

ա. համախառն հաշվեկշռային արժեքը,

բ. հաշվարկված ամորտիզացիան,

գ. արժեզրկումը,

2) հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում՝

ա. ճանաչված լրացուցիչ գուդվիլը,

բ. հետաձգված հարկերի հետագա ճանաչմամբ պայմանավորված գուդվիլի ուղղումները,

գ. այլ:

9. Ներկայացնել տեղեկատվություն հաշվետու ժամանակաշրջանում խմբի մասնակիցների կողմից կատարված

էական (գործարքի պահի դրությամբ տվյալ մասնակցի կապիտալի 5%-ը գերազանցող, ընդ որում, կապիտալը նվազեցվում է մասնակցի կողմից այլ անձանց կապիտալներում կատարված ներդրումների չափով) գործարքների վերաբերյալ՝ նշելով գործարքի նպատակը, արժեքը, գործարքի ֆինանսական արդյունքները, արտոնյալ պայմանների առկայությունը (բացակայությունը), այլ հիմնական պայմանները և իրականացման կարգը.

1) խմբի մասնակիցների միջև,

2) խմբի մասնակիցների հետ փոխկապակցված անձանց հետ,

3) խմբի մասնակիցների հետ համատեղ այլ անձանց հետ: Ընդ որում, եթե գործարքի ֆինանսավորումը իրականացված է վարկի (փոխառության) միջոցով, ապա այդ վարկի (փոխառության) պայմանները՝ գումարը, տոկոսադրույքը, մարման պայմանները և ժամկետները, ապահովվածության նկարագրությունը:

10. Ներկայացնել նախորդ և հաշվետու ժամանակաշրջանների վերջի դրությամբ մայր բանկի և խմբի կազմի մեջ մտնող այլ անձանց հետ գործարքների գծով առկա մնացորդները:

Մայր բանկի վարչության նախագահ _____

Մայր բանկի գլխավոր հաշվապահ _____

(Հավելված 1 խմբ. 12.06.07 N 181-Ն)

	բանկային ստանդարտացված ձուլակտորներ										
112	Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներ ճանապարհին										0
113	Հուշադրամներ										0
	Ընդամենը թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներ և հուշադրամներ	0				0	0	0		0	0
12	<i>Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներ</i>										
120	ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր										
121	ՀՀ պետական արժեթղթեր										0
122	ՀՀ ոչ պետական արժեթղթեր										0
123	Այլ երկրների պետական արժեթղթեր										0
124	Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր										0
125	Ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթեր										0
126	Ֆակտորինգային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ										0
127	Աժանցյալ գործիքներ										0
	Ընդամենը առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներ	0				0	0	0		0	0

Ընդամենը ոչ նյութական ակտիվներ	0				0	0	0	0	0
24 Հիմնական միջոցներ									
241 Հիմնական միջոցներ									0
242 Հիմնական միջոցների ամորտիզացիա									0
Ընդամենը հիմնական միջոցներ	0				0	0	0	0	0
25 Շահագործումից դուրս հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ									
251 Շահագործումից դուրս հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ									0
Ընդամենը շահագործումից դուրս հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	0				0	0	0	0	0
26 Արագամաշ առարկաներ									
261 Արագամաշ առարկաներ									0
Ընդամենը արագամաշ առարկաներ	0				0	0	0	0	0
27 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում									
271 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում									0
272 Շահագործումից դուրս հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում									0
Ընդամենը հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների	0				0	0	0	0	0

արժեզրկում										
28	Ֆինանսական վարձակալության դիմաց չվաստակած ֆինանսական եկամուտներ									
281	Ֆինանսական վարձակալության դիմաց չվաստակած ֆինանսական եկամուտներ									0
	Ընդամենը ֆինանսական վարձակալության դիմաց չվաստակած ֆինանսական եկամուտներ	0				0	0	0	0	0
29	Այլ ակտիվներ									
291	Այլ ակտիվներ									0
	Ընդամենը այլ ակտիվներ									0
	Գուդվիլ (որն ի հայտ է եկել դուստր ընկերության ձեռքբերման հետևանքով կամ ասոցիացված կազմակերպությունում ներդրման հետևանքով)	X				X				0
	Բացասական գուդվիլ (որն ի հայտ է եկել դուստր ընկերության ձեռքբերման հետևանքով կամ ասոցիացված կազմակերպությունում ներդրման հետևանքով)	X				X				0
	Ընդամենը ակտիվներ	0				0	0	0	0	0

	Ժամկետային ավանդներ									
323	Այլ ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր									0
324	Ռեպո համաձայնագրեր , բանկերի և այլ ֆինանսական									0
325	կազմակերպությունների հետ									
326	Ռեպո համաձայնագրեր , իրավաբանական անձանց,									0
327	ֆիզիկական անձանց և հիմնարկների հետ									
328	Արժույթային սվոպ									
	Ընդամենը այլ ֆինանսական կազմակերպություններից փոխառություններ	0				0	0	0	0	0
33	Պարտավորություններ այլ ավանդատուների նկատմամբ									
331,	Բանկային հաշիվներ									0
332										
333	Հաճախորդներից ներգրաված , ցպահանջ ավանդներ									0
334										
335	Հաճախորդներից ներգրաված , ժամկետային ավանդներ									0
336										
	Ընդամենը պարտավորություններ այլ ավանդատուների նկատմամբ	0				0	0	0	0	0
34	Պարտավորություններ ՀՀ Կառավարության նկատմամբ									

341	Ծրագրերի իրականացման գրասենյակների հաշիվներ									0
342	Վարկեր գանձապետարանից									0
343	Այլ պարտավորություններ կառավարության, տեղական ինքնակառավարման մարմինների և սոցիալական ապահովության հիմնադրամի նկատմամբ									0
Ընդամենը պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ		0				0	0	0	0	0
35	<i>Բանկի կողմից թողարկված արժեթղթեր, առևտրական և հեջավորման նպատակներով պահվող ածանցյալ գործիքներ</i>									
351	Բանկի կողմից թողարկված ավանդային սերտիֆիկատներ									0
352	Բանկի կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթեր									0
353	Բանկի կողմից թողարկված տոկոսային արժեթղթեր									0
354	Բանկի կողմից թողարկված արտոնյալ բաժնետոմսեր									0
355	Թողարկված այլ արժեթղթեր									0
356	Առևտրական նպատակներով պահվող ածանցյալ գործիքներ									0
357	Հեջավորման ածանցյալ գործիքներ									0
Ընդամենը բանկի կողմից		0				0	0	0	0	0

թողարկված արժեթղթեր, առևտրական և հեջավորման նպատակներով պահվող ածանցյալ գործիքներ										
36 Այլ վճարվելիք գումարներ										
361 Վճարման ենթակա շահաբաժիններ										0
362 Պարտավորություն ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի գծով										0
363 Հավատարմագրային կառավարման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ										0
364 Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարներ										0
365 Պարտավորություններ ավանդների ապահովագրության գծով										0
366 Ապագա ժամանակաշրջանի եկամուտներ										0
367 Պարտավորություններ արժույթային սվոպի գծով										0
369 Այլ պարտավորություններ										0
Ընդամենը այլ վճարվելիք գումարներ	0				0	0	0	0	0	0
37 Հաշվարկային պարտավորություններ վճարային փաստաթղթերով										

371	Հաշվարկային պարտավորություններ չեկերով և այլ վճարային փաստաթղթերով									0
372	Հաշվարկային պարտավորություններ ակրեդիտիվների գծով									0
	Ընդամենը հաշվարկային պարտավորություններ վճարային փաստաթղթերով	0			0	0	0	0	0	0
38 Կրեդիտորական պարտքեր և տարանցիկ հաշիվներ										
381	Հաշվարկներ բանկի և իր մասնաճյուղերի միջև									0
382	Կրեդիտորական պարտքեր բյուջեի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով									0
383	Ներքին և արտաքին կրեդիտորական պարտքեր									0
384	Տարանցիկ հաշիվներ									0
	Ընդամենը կրեդիտորական պարտքեր և տարանցիկ հաշիվներ	0			0	0	0	0	0	0
39 Հետաձգված հարկային պարտավորություններ										
391	Հետաձգված հարկային պարտավորություններ									0
	Ընդամենը հետաձգված հարկային	0			0	0	0	0	0	0

պարտավորություններ										
40 Ակտիվներին վերաբերող շնորհներ										
401	Ակտիվներին վերաբերող շնորհներ									0
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություններ		0			0	0	0	0	0	0
41 Պահուսպներ										
411	Պահուստներ									0
Ընդամենը պահուստներ		0			0	0	0	0	0	0
42 Ֆինանսական վարձակալության դիմաց չկրած ֆինանսական ծախսեր										
421	Ֆինանսական վարձակալության դիմաց չկրած ֆինանսական ծախսեր									0
Ընդամենը ֆինանսական վարձակալության դիմաց չկրած ֆինանսական ծախսեր		0			0	0	0	0	0	0
	Դուստր ընկերության կապիտալում փոքրամասնության բաժնեմասը նախորդ ժամանակաշրջանի դրությամբ	X			X					0
	Դուստր ընկերության կապիտալում փոքրամասնության բաժնեմասը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ	X			X					0
Ընդամենը պարտավորություններ		0			0	0	0	0	0	0

ԿԱՊԻՏԱԼ/ՍԵՓԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ/										
50	Կանոնադրական հիմնադրամ									
501	Արտոնյալ բաժնետոմսեր									0
501	Արտոնյալ բաժնետոմսեր- անվանական արժեք									0
501	Արտոնյալ բաժնետոմսեր- էմիսիոն եկամուտ									0
501	Արտոնյալ բաժնետոմսեր-զեղչ 3									0
502	Սովորական բաժնետոմսեր									0
502	Սովորական բաժնետոմսեր- անվանական արժեք									0
502	Սովորական բաժնետոմսեր- էմիսիոն եկամուտ									0
502	Սովորական բաժնետոմսեր- զեղչ									0
503	Կանոնադրական հիմնադրամ կոոպերատիվ և ՍՊԸ բանկերի համար									0
504	Զվճարված կապիտալ									0
	Ընդամենը կանոնադրական հիմնադրամ	0				0	0	0	0	0
51	Պահուսպներ									
511	Գլխավոր պահուստ									0
512	Վերագնահատման պահուստներ									0
	Ընդամենը պահուստներ	0				0	0	0	0	0

52	Բանկի կողմից հետ գնված սեփական բաժնետոմսեր									
521	Բանկի կողմից հետ գնված սեփական բաժնետոմսեր									0
	Ընդամենը բանկի կողմից հետ գնված սեփական բաժնետոմսեր	0				0	0	0	0	0
53	Զբաղիված շահույթ									
531	Զբաղիված շահույթ									0
531	Ընթացիկ ժամանակաշրջանի 1 չբաղիված շահույթ/վնաս									0
531	Նախորդ 2 ժամանակաշրջանների չբաղիված շահույթ/վնաս									0
532	Նախորդ ժամանակաշրջանների չբաղիված շահույթի ճշգրտում									0
	Ընդամենը չբաղիված շահույթ	0				0	0	0	0	0
	Ընդամենը կապիտալ	0				0	0	0	0	0
	Ընդամենը կապիտալ և պարտավորություններ	0				0	0	0	0	0

Մայր բանկի վարչության նախագահ

Մայր բանկի գլխավոր հաշվապահ

(Հավելվածը խմբ. 25.11.03 N 398-Ն, 12.06.07 N 181-Ն, 21.12.10 թիվ 340-Ն)

Հավելված 2.1

ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԱՄՍԱԹՎԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ ԴՈՒՍՏՐ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

N	Հաշիվ	Հաշվեկշռային արժեք	Իրական արժեք	Հաշվեկշռային և իրական արժեքների տարբերություն	Հաշվեկշռային և իրական արժեքների տարբերությունում (տեղաբաշխման մեջ) մայր բանկի բաժնեմասը
1	2	3	4	5	6
	Ընթացիկ ակտիվներ 1, 2, 3.....				
	Ոչ ընթացիկ ակտիվներ 1, 2, 3.....				
	Պարտավորություններ				
	Զուտ հաշվեկշռային արժեք				
	Կապիտալ		-	-	-

	այդ թվում՝ արտոնյալ բաժնետոմսերի գծով										
	սովորական բաժնետոմսերի գծով										
	Չբաշխված շահույթի այլ բաշխում										
Ընդամենը չբաշխված շահույթ		0				0	0	0	0	0	0

Մայր բանկի վարչության նախագահ

Կ.Տ.

(գործադիր տնօրեն)

Մայր բանկի գլխավոր հաշվապահ

(Հավելվածը խմբ. 25.11.03 N 398-Ն, 12.06.07 N 181-Ն, 21.12.10 թիվ 340-Ն)

«Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի կողմից
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող համախմբված
հաշվետվությունների կազմման կարգի»

Հ Ա Մ Ա Խ Մ Բ Վ Ա Ծ Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Արտարժույթային դիրքերի վերաբերյալ

Մայր բանկի անվանումը _____
Ամսաթիվը _____ թ-ից մինչև _____

Աղյուսակ 1 (ածանցյալ գործիքներով)

(հազ. դրամ)

Ամսվա օրերը	Արտարժույթային դիրքի մեծությունն օրվա վերջին			Արտարժույթի տնօրինման նորմատիվի սահմանաչափը	Տարբերությունը (+ / -) (4-5)
	I արտարժույթային խմբի համախառն դիրք	II արտարժույթային խմբի համախառն դիրք	Արտարժույթային համախառն դիրք		
1	2	3	4	5	6
1					
2					
3					
4					
....					
30					

31					
----	--	--	--	--	--

Աղյուսակ 2 (առանց ածանցյալ գործիքների)

Արտարժույթային դիրքի մեծությունն օրվա վերջին					
	I արտարժույթային խմբի համախառն դիրք	II արտարժույթային խմբի համախառն դիրք	Արտարժույթային համախառն դիրք	Արտարժույթի տնօրինման նորմատիվի սահմանաչափը	Տարբերությունը (+ / -) (4-5)
1	2	3	4	5	6
1					
2					
3					
4					
....					
30					
31					

Աղյուսակ 2.1 (Կանոնակարգ 2-ի 56.2-րդ կետում նշված ածանցյալ գործիքներով)

Արտարժույթային դիրքի մեծությունն օրվա վերջին					
	I արտարժույթային խմբի համախառն դիրք	II արտարժույթային խմբի համախառն դիրք	Արտարժույթային համախառն դիրք	Արտարժույթի տնօրինման նորմատիվի սահմանաչափը	Տարբերությունը (+ / -) (4-5)
1	2	3	4	5	6
1					
2					
3					
4					
....					
30					

պարունակող դրամային պարտավորություններ																									
3 Արտարժույթային հետհաշվեկշռային հոդվածներ																									
Իսրայելական Հանրապետության	Լեհական Հանրապետության	Լիբանանի Հանրապետության	Հնդկական Հանրապետության	Նորվեգական Հանրապետության	Շվեդական Հանրապետության	Չեխական Հանրապետության	Չինական Հանրապետության	Սինգապուրյան Հանրապետության	Սլովակական Հանրապետության	Հարավսլավոնական Հանրապետության	Բրազիլական Հանրապետության	Մեքսիկական Հանրապետության	Սաուդյան Արաբական Ռիալ	Սիրիական Դրամ	ՄԱԷ դիրհամ	Քուվեյթի թյուն	Ռումինական Լեյ	Իսլանդական Հանրապետության	Էստոնական Հանրապետության	Լատվիական Լատ	Լիտվական Լիտ	Ղրղզական սոմ	Ղազախստանի Կոնտենգետ	Մոլդովական Լեյ	Այլ արտարժույթ

(Հավելվածը խմբ. 25.11.03 N 398-Ն, 06.07.05 N 334-Ն, 12.06.07 N 181-Ն, 21.12.10 թիվ 340-Ն)

Հավելված 5

(Հավելվածն ուժը կորցրել է 21.12.10 թիվ 340-Ն)

Հավելված 6

(Հավելվածն ուժը կորցրել է 21.12.10 թիվ 340-Ն)